ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մարտի 2025թ. թիվ 117-Ա

ԼԱՈՒՐԱ ԱՊԵՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի փետրվարի 19-ի թիվ 99-Ա որոշման հիման վրա իրականացված ծառայողական քննության արդյունքում կազմված եզրակացությունը, կից նյութերը և Լ.Ապերյանի բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշխատանաքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պարտականությունները կատարող Լաուրա Ապերյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. մարտի 5
ք.Վանաձոր